ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

8 ապրիլի 2015թ. N 74-Ա

ք.Ստեփանակերտ

ԹԻՎ 1 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ Տ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թիվ 1 ընտրատարածքում գրանցված Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Տիգրան Յուրիի Հայրապետյանը 2015 թվականի ապրիլի 4-ին ներկայացրել է ինքնաբացարկի մասին դիմում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 119-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Պատգամավորի թեկնածուները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո դիմում ներկայացնելու դեպքում իրավունք ունեն հանելու իրենց թեկնածությունը: Ինքնաբացարկի մասին դիմումը վավերացվում է նոտարական կարգով, կամ թեկնածուն ինքնաբացարկի մասին իր դիմումը հաստատում է հանձնաժողովի նիստում:»:

Նույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն «Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում՝ 1) կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ, եթե նա ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին.»:

Վերոգրյալը հիմք ընդունելով և հաշվի առնելով, որ Տ.Հայրապետյանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 8-ի նիստում հաստատել է ինքնաբացարկի մասին իր դիմումը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել թիվ 1 ընտրատարածքում գրանցված Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Տիգրան Յուրիի Հայրապետյանի գրանցումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ